

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
« Ս Ո Ւ Ս Ի - Ս Թ Ո Ո Ւ Ն »
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Յ Տ
ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍԻ ԲԱԶԱԼՏԻ
ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

(Լրամշակված տարբերակ)

«ՍՈՒՍԻ-ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ՝

ԱՆՆԱ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ
2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ	2
2. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	5
3. ՁԵՌՆԱՐԿՈՂԻ ԱՆՈՒՆԸ (ԱՆՎԱՆՈՒՄԸ) ԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ (ԳՏՆՎԵԼՈՒ) ՎԱՅՐԸ	6
4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ	7
5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	7
6. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ	10
Ռեկիեֆ, երկրաձևաբանություն	13
Կլիման	15
Մթնոլորտային օդ	21
Ջրային ռեսուրսներ	21
Հողեր	21
Բուսական և կենդանական աշխարհ	24
Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ	27
7. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	31
Ենթակառուցվածքներ	31
Հողերի տնտեսական յուրացման բնութագիր	35
Պատմության, մշակութային հուշարձաններ	36
8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	37
9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	40
10. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ԲԱՑԱՌՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ ...	37
11. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ	41
12. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	45

1. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման օրենսդրական դաշտը

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (ընդունվել է 2015թ.) 12-րդ հոդվածը «Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը» սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների ողջամիտ օգտագործման վերաբերյալ՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

Ստորև ներկայացվում են շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող մի շարք ՀՀ օրենքներ և կառավարության որոշումներ:

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքը (2014)
- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքը (1998)
- «Բուսական աշխարհի մասին» օրենքը (1999)
- «Կենդանական աշխարհի մասին» օրենքը (2000)
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքը (1994թ.)
- ՀՀ Հողային օրենսգիրքը (2001)
- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրքը (2011)
- ՀՀ Զրային օրենսգիրքը (2002)
- «Թափոնների մասին» օրենքը (2004)
- «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքը (2005)
- «Զրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» օրենքը (2005)
- ՀՀ անտառային օրենսգիրքը (2005)
- «ՀՀ Զրի ազգային ծրագրի մասին» օրենքը (2006)
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքը (2006)

• «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» օրենքը (2008)

• Կառավարության 29.01.2010թ. «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N72-Ն որոշումը

• Կառավարության 29.01.2010թ. «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշումը

• Կառավարության 14.08.2008 թ. «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշումը

• Կառավարության 02.11.2017 թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 20.07.2006.N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1404-Ն որոշումը

• Կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշումը

• Կառավարության 14.12.2017թ. «Հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջները եվ խախտված հողերի դասակարգումն ըստ ռեկուլտիվացման ուղղությունների սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N750-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1643-Ն որոշումը

• Կառավարության 22.02.2018թ. «Ընդերքօգտագործման հետեվանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N191-Ն

• Կառավարության 08.09.2011թ. «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, հայաստանի հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի n 1622-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու եվ 2001 թվականի ապրիլի 12-ի N 286-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N1396-Ն

• Կառավարության 15.06.2017թ. «Ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանի եվ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանի օրինակելի ձեվերը հաստատելու մասին» N676-Ն:

Հաշվի են առնվել նաև կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա, կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 10-ի նիստի «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 և կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի նիստի «Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N23 արձանագրային որոշումները, ներառյալ ՀՀ կողմից վավերացրած բնապահպանական միջազգային պայմանագրերի պահանջները:

Հայաստանը վավերացրել է մի շարք միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ կապված շրջակա միջավայրի կառավարման խնդիրների հետ՝ ՀՀ բնապահպանության նախարարության <http://env.am/> համացանցային կայքում առկա ցանկով:

Միջազգային համաձայնագրեր.

1. «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն)

2. «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար.)

3. «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն)

4. «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (CITES) (Վաշինգտոն)

5. Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա)

6. «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ)
7. ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք)
8. «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո-դե-ժանեյրո)
9. «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիա (Ստոկհոլմ)
(վավերացվել է ՀՀ կառավարության կողմից 2003թ.-ին)
10. «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել):

2. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են

Հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.

Օգտակար հանածոյի երևակում՝ ընդերքի տեղամաս, որում հայտնաբերվել է օգտակար հանածոյի առկայություն, որի քանակը, որակը և արդյունաբերական նշանակությունը դեռ որոշված չեն

Օգտակար հանածոյի արդյունահանում՝ օգտակար հանածոյի դուրսբերումը հանքավայրերից և դրանց մեջ պարփակված օգտակար բաղադրիչների կորզմանն ուղղված աշխատանքների համալիր

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում

Բնապահպանական միջոցառումների ծրագիր՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման/կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ

Բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում

Կարմիր գիրք՝ հազվագյուտ և ոչնչացման վտանգի տակ գտնվող կենդանիների, բույսերի և սնկերի լրացման, խմբագրման ենթակա ցուցակ

Հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական

մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով **Ռեկուլտիվացում՝** խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական

Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք **Խախտված հողեր՝** առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր:

3. ՁԵՌՆԱՐԿՈՂԻ ԱՆՈՒՆԸ (ԱՆՎԱՆՈՒՄԸ) ԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ (ԳՏՆՎԵԼՈՒ) ՎԱՅՐԸ.

Անվանում	«Սուսի-Սթոուն» ՍՊԸ
Գտնվելու վայր	Երևան, Արզումանյան 4, բնակարան 28

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

«Սուսի Սթոուն» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է Կոտայքի մարզի Արամուսի բազալտի հանքավայրում իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ: Հանքավայրը նախկինում շահագործվել է «Բեն-Ան» ՍՊԸ-ի կողմից՝ 2013թ. հունիսի 2-ի ընդերքօգտագործման պայմանագրի՝ ՊՎ-410 և լեռնահատկացման ակտի՝ ԼՎ-410 ՇԱԹՎ-29/410 օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության հիման վրա:

Հանքավայրի պաշարները հաստատվել են ԽՍՀՄ պաշարների պետական հանձնաժողովի կողմից 1971թ. Սեպտեմբերի 29-ին N6341 արձանագրությամբ հետևյալ կարգերով և քանակներով՝

A – 498 հազ խմ

B – 556 հազ խմ

C₁ – 944 հազ խմ

A+B+C₁ = 1.998 հազ խմ:

Պիտանի բլոկների ելքը կազմում է 22.3%, շինաքարերի ելքը՝ 17.6%, երեսապատման սալիկների ելքը՝ 13-36քմ/խմ: Արդյունահանման թափոնները և ճարճքված բազալտները պիտանի են բազալտե խճի և ավազի արտադրության համար:

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արամուսի բազալտի հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներն իրականացվելու են բաց եղանակով:

Ելնելով բազալտների օգտակար հաստվածքի տեղադրման լեռնաերկրաբանական պայմաններից, նախագծվող բացահանքը բնութագրվում է հետևյալ պարամետրերով.

հանքաստիճանի բարձրությունը, մ	2,5
առավելագույն երկարությունը, մ	270
առավելագույն լայնությունը, մ	205

առավելագույն խորությունը, մ	22,5
օտարման մակերեսը, հա	8. 86326 հա
շահագործման ժամկետ	10 տարի
տարեկան արտադրողականություն ըստ օգտակար հանածոյի զանգվածի, հազ.մ3	30. 0 հազ. մ ³
մակաբացման ապարներ	104.3 հազ. մ ³

Հանքաստիճանի բարձրությունը՝ H=2.5մ: Բազալտների արդյունահանումը կատարվելու է համատարած ձևով, հորատասեպային եղանակով: Ենթաստիճանի հորատման համար ընդունված է հորատման մուրճ: Բլոկների բարձման ու տեղափոխման համար ընդունված են ավտոկռունկ, իսկ թափոնների բարձման համար միաշերտի էքսկավատոր և ավտոինքնաթափ:

Բլոկների բարձման ու տեղափոխման համար ընդունված են ավտոկռունկ, իսկ թափոնների բարձման համար միաշերտի էքսկավատոր և ավտոինքնաթափ:

Բացահանքի աշխատանքային ռեժիմը նախատեսվում է շուրջտարյա, միահերթ, 8 ժամ տևողությամբ հերթափոխով և տարվա 260 աշխատանքային օրով:

Բացահանքի հարևանությամբ գործում են այլ հանքեր՝ «ԼԱՄՕ» ՍՊԸ, «Դրեամ Սթոն» ՍՊԸ, որոնք գտնվում են նախատեսվող գործունեության ենթակա տարածքից 300-1. 600մ հեռավորության վրա՝ հանքավայրից հարավ-արևմտյան հատվածում 1,6կմ հեռավորության վրա, հարավ-արևելյան հատվածում 550մ և 1,13կմ հեռավորության վրա առկա հանքավայրերի հեռավորությունները:

Տարածքում առկա են ձևավորված ենթակառուցվածքներ, ճանապարհներ:

Ամենամոտ բնակելի տնի ունեցած ի հեռավորությունը կազմում է ավելի քան 650մ, ճանապարհից 460 մետր:

Արդյունահանման աշխատանքների ժամանակ տեղամասի առանձին հատվածներում առկա է մինչև 0,2մ հզորությամբ հողաբուսական շերտ, ինչը կհանվի, կպահեստավորվի ներքին ժամանակավոր լցակայանում, որտեղ կկույտավորվի և կպահպանվի՝ ՀՀ կառավարության 2017թ. նոյեմբերի 2-ի N1404-Ն որոշման համաձայն՝ հետագա ռեկուլտիվացիոն աշխատանքներ իրականացնելու նպատակով:

Հայցվող տարածքի մակերեսը կազմում է մոտ 8. 86326 հա, առկա են ձևավորված ենթակառուցվածքներ, ճանապարհներ: Արդյունահանման աշխատանքների ժամանակ տեղամասի առանձին հատվածներում առկա մինչև 0,2մ հզորությամբ հողաբուսական շերտը կհանվի, կպահեստավորվի ներքին ժամանակավոր լցակույտում, որտեղ կկույտավորվի և կպահպանվի հետագա ռեկուլտիվացիոն աշխատանքների համար: Արդյունահանման աշխատանքների ավարտից հետո կատարվելու է խախտված տարածքների լեռնատեխնիկական ռեկուլտիվացիա:

Հանքաքարի վերամշակում չի նախատեսվում, նախատեսվում է օգտակար հանածոն վաճառել սպառողներին տեղում:

Մակաբացման ապարները ներկայացված են 2.2-ից 3.6 մ (միջինը 3.0մ) հզորության բազալտների տարաչափ բեկորներ պարունակող դեյուվիալ առաջացումներով, որոնք առանց դժվարության կարող են հեռացվել բուլդոզերով:

Օգտակար հանածոն ներկայացված է 3.8-ից 5.8 մ (միջինը 4.47 մ) հզորության մերձհորիզոնական տեղադրմամբ խիստ ճեղքավորված, ջարդոտված բազալտե հաստվածքով, որի մշակումը, կախված ծավալներից, նախատեսվում է իրականացվել հորատապայթեցման աշխատանքների միջոցով:

Տեղամասում հաշվարկված մակաբացման ապարների ծավալը և օգտակար հանածոյի պաշարները համապատասխանաբար կազմում են 104.3 հազ. մ³ և 155.4 հազ. մ³, իսկ մակաբացման միջին գործակիցը՝ 0.87 մ³/մ³:

Նախատեսվում է տարեկան արդյունահանել մոտ 30.0 հազ. խմ օգտակար հանածոյի զանգված:

Լցակույտեր՝ նախատեսվում են ներքին՝ լեռնահատկացման սահմաններում:

Արդյունահանման ժամանակ փոշենստեցման նպատակով կիրականացվի ջրցան այնպիսի ծավալներով, որ չառաջանա արտահոսք:

Տեխնիկական և խմելու ջուրը կբերվի Արամուս գյուղի համապատասխան ջրամատակարարման ցանցերից՝ կամ, անհնարինության դեպքում, պայմանագրայի հիմունքներով ջրօգտագործման պայմանագրերի համաձայն:

Տեխնիկական և խմելու նպատակով անհրաժեշտ ջրի ծավալի հաշվարկը կներկայացվի ՇՄԱԳ հաշվետվությունում:

**6. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ,
ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ
ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ**

Արամուսի բազալտի հանքավայրը վարչական տեսակետից գտնվում է Կոտայքի մարզի տարածքում և տեղակայված է Արամուս և Կամարիս գյուղի հարևանությամբ՝ 1500-1550մ բացարձակ բարձրությունների վրա: Արդյունահանման ենթակա տարածքը անհարթ է՝ շրջափակված բլրակների շարքով: Մոտակա երկաթուղային Աբովյան կայարանը գտնվում է տեղամասից մոտ 6 կմ հյուսիս- արևմուտք: Հանքավայրի մոտակա բնակավայրերն են՝ Արամուս համայնքը, որը գտնվում է հանքից 1,3 կմ հյուսիս, Կամարիս համայնքը՝ հանքից 1,9 կմ հյուսիս-արևելք և Մայակովսկի համայնքը՝ 2,3 կմ հյուսիս-արևմուտք: Տեղամասը Երևան-Թբիլիսի ավտոմայրուղու հետ կապված է Աբովյան-Մայակովսկի-Արամուս-Կամարիս ասֆալտապատ ճանապարհով: Աբովյան և Երևան քաղաքների հետ կապված է համապատասխանաբար 6 և 21 կմ երկարությամբ ավտոճանապարհով:


Հայցվող տեղամասի կոորդինատներն են ARM WGS համակարգով.


N	X	Y
1	8470999,7625	4455949,6067
2	8471024,2268	4455926,0868
3	8471029,9984	4455920,5380
4	8471065,9735	4455884,5960
5	8471038,0000	4455810,0000
6	8471250,0000	4455758,0000
7	8471318,0000	4455918,0000
8	84 71374,0000	4456108,0000
9	8471361,6482	4456239,9687
10	8471337,7532	4456236,5579
11	8471307,6710	4456227,1783
12	8471291,4565	4456219,7172
13	8471286,3361	4456219,0777
14	8471267,7112	4456210,7639
15	8471261,5241	4456203,0897
16	8471258,5372	4456195,7778
17	8471252,9902	4456176,5922

18	8471249,3633	4456160,6042
19	8471245,5230	4456141,2055
20	8471240,6160	4456104,4332
21	8471237,6291	4456080,2380
22	8471229,7885	4456046,5567
23	8471223,3563	4456032,9776
24	8471214,9291	4456015,0710
25	8471207,4960	4455995,6875
26	8471198,5741	4455970,1212
27	8471111,5282	4455991,0146
28	8471159,2518	4456098,5628
29	8471145,2116	4456101,8873
30	8471137,2542	4456088,0069
31	8471121,4921	4456066,5777
32	8471105,8208	4456044,9293
33	8471083,3405	4456023,7583
34	8471056,2091	4456001,1674
35	8471047,0360	4455993,5511

Արամուսի բազալտի հանքավայրի շրջանի խոշորագույն քաղաքաշինական միավորը Աբովյան քաղաքն, որի հարևանությամբ է անցնում Երևան-Սևան մայրուղին: 2016թ. հունվարի 1-ի դրությամբ բնակչության թվաքանակը կազմել է 44417 մարդ: Այստեղ է բնակվում մարզի քաղաքային բնակչության 32.2%-ը, որը կազմում է մարզի ընդհանուր բնակչության 17.5%-ը: Վերջին 3 տարիներին բնակչության թվաքանակը նվազել է 400-ով: Վարչական տարածքը կազմում է 1112 հա, որից արդյունաբերական հողեր՝ 93 հա, գյուղատնտեսական՝ 107 հա, բնակելի՝ 327 հա, որից տնամերձ՝ 116 հա, հասարակական՝ 342 հա: Քաղաքն ունի 265 բազմաբնակարան և 1500 անհատական բնակելի տներ: Քաղաքը նախկինում համարվել է խոշոր արդյունաբերական կենտրոն: Գործում են սննդամթերքի, խմիչքների, դեղերի և դեղագործական ապրանքների, ինչպես նաև օրգանական պարարտանյութերի արտադրության ձեռնարկություններ, հանքարդյունաբերական տեխնիկայի ներմուծման, շինարարական կազմակերպություններ: Քաղաքում է գտնվում Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոնը: Քաղաքում գործում են պետական ճարտարագիտական քոլեջը, պետական էներգետիկական քոլեջը, Լ.Օրբելու անվան համալսարանը և բժշկական ուսումնարանը:







■ Արամուսի բազալտի հանքավայր

ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԻՆԵՄԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԻԱՆ ՆՇԱԳՐՈՒՄՆԵՐՈՎ

Ռեչիեֆ, երկրաձևաբանություն

Արամուսի բազալտների հանքավայրը երկրաձևաբանական տեսակետից տեղադրված է Կոտայքի (Քանաքեռի) հրաբխային սարահարթի կենտրոնական մասում, որը բլրային ռեչիեֆով տարածք է՝ կտրտված բազմաթիվ ձորակներով և սարավանդային խոր գետահովիտներով:



Կոտայքի սարահարթը տարածվում է Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասից մինչև Գեղամա լեռների արևմտյան ստորոտները : Գեղամաս լեռնաշղթան կենտրոնական մասում բարձրացած հիմքով լեռնավահան է, մոտ 65 կմ երկարությամբ և 35 կմ լայնությամբ, որի վրա շարված են բազմաթիվ հրաբխային կոներ, այդ թվում ամենաբարձր գագաթ Աժդահակը՝ 3597.3 մ բարձրությամբ, ինչպես նաև Սևկատարը 3225.1մ, Սպիտակասարը 3555.7մ, Նազելին 3312մ, Վիշապասարը 3157.7մ, Եռակատարը 2589.6մ, Գեղասարը 3443մ, Ծաղկավետը 3076մ, Մանկունքը 2932.1մ: Հաճախ Գեղամա լեռնաշղթայի մեջ են մտցվում նաև Հատիս 2529.4մ, Գութանասար 2299.6մ, Մենակսար 2399.4մ, Մեծ Լճասար 2393.8մ, Փոքր Լճասար 2334.2մ, Արմաղան 2829.1մ և այլ հրաբխային լեռնագագաթներ, որոնք բավական հեռու են տեղադրված բուն լեռնաշղթայից:

Հարավ-արևմուտքում Կոտայքի սարահարթը աստիճանաբար ցածրանալով ձուլվում է Արարատյան դաշտին, արևելքում առաջացնում է Ավանի գոգավորությունը, ապա Գետառ և Ջրվեժ գետերի ջրբաժանը: Ունի դեպի արևմուտք և հարավ-արևմուտք ընդհանուր թեքություն, 1200-1500մ բարձրություն, թույլ մասնատված, լավային ալիքավոր մակերևույթ : Տեղ-տեղ բաձրանում են 50-60մ հարաբերական բարձրությամբ մնացորդային բլրակներ և խարամային կոներ :

Ըստ ՀՀՇՆ II-2-94 «Սեյսմակայուն Շինարարություն Նախագծման Նորմեր» նորմատիվային փաստաթղթի դրույթների տեղամասի տարածքը գտնվում է երկրորդ սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.27-0.34g առավելագույն հորիզոնական արագացման արժեքը:


Տեղամասի տարածքում սողանքային երևույթներ չեն արձանագրվել: Մոտակա սողանքային մարմինը գտնվում է տեղամասից շուրջ 4.5կմ հարավ-հարավ-արևելք:

Շրջանի լանջերի թեքության և լեռների երկրաձևաբանական սխեմատիկ քարտեզները ներկայացված են ստորև նկար 3 և 4-ում:



Նկար 3. Մակերևույթի գերակշռող թեքություններ

■ Արամուսի բազալտի հանքավայր



Նկար 4. Երկրաձևաբանական սխեմատիկ քարտեզ


- Արամուսի բազալտի հանքավայր

Կլիման

Կլիմայական տեսակետից Արամուսի բազալտի հանքավայրի շրջանը մտնում է չափավոր ցուրտ ձմեռով և տաք ամառով բնորոշվող գոտու մեջ: Կամարիս բնակավայրում և նրա շրջապատում բնութագրվում է հետևյալ կերպ (ըստ Մայակովսկու օդերևութաբանական կայանի կատարած հետազոտությունների). օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը – 29°C:, իսկ առավելագույնը՝ +38°C:, օդի միջին տարեկան ջերմաստիճանը՝ +15°C:, տարվա ամենացուրտ ամսվա՝ հունվարի միջին ջերմաստիճանը՝ - 15-18°C:, տարվա ամենատաք ամսվա՝ օգոստոսի միջին ջերմաստիճանը՝ + 30°C: Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը կազմում է 534մմ: Ձյան ծածկույթի միջին հաստությունը հասնում է 15-30սմ: Հողի սառցակալման առավելագույն խորությունը հասնում է 61սմ: Քամիների գերակշռող ուղղությունը ամռանը և ձմռանը հարավից, տարեկան միջին արագությունը 1.7մ/վրկ:

Հողի սառեցման հաշվարկային խորությունը 82 սմ, Ջեռուցման սեզոնի տևողությունը կազմում է 160 օր, միջին ջերմաստիճանը - 1.10C:

Ստորև նկար 5-ում ներկայացված են շրջանին բնորոշ կլիմայի տիպերի տարածումը:



Նկար 5.

Օդի ջերմաստիճան (ըստ ՀՀ ՇՆ 11-7.01.2011) (աղյուսակ 2)

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից մ3	Միջին ջերմաստիճանը, ըստ ամիսների C°												Միջին տարեկան, C°	Նվազագույն, C°	Առավելագույն, C°
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Եղվարդ	1336	-5,1	-3,2	2,4	9,3	14,3	18,6	22,7	22,7	18,5	11,7	4,8	-1,9	9,6	-33	39

Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, ըստ ամիսների, %												Միջին	Միջին ամսական ժ. – 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VI I	VI II	IX	X	XI	XI I		ամենացուրտ	ամենաշոգ
Եղվարդ	73	69	63	60	60	54	50	48	49	59	70	74	61	66	33

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը, մմ <u>միջին ամսական</u> օրական առավելագույն ¹⁶	Չնաժառնարակ
--	---	-------------

	Ամիսներ												Տարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ճանաչված կույտ-թուղթերի քանակը	Ձյան մեջ առավելագույն քանակը, սմ
	I	II	III	IV	V	VI	VII	VII I	IX	X	XI	XII				
Եղվարդ	34	36	43	58	64	39	23	13	16	39	36	35	436	68	74	156
	30	28	42	40	42	29	53	45	35	39	37	28	53			

Մթնոլորտային տեղումները և ճանաչված կույտը

Քամի

Բնակավայրի, օրերևու թափանցանկայ անի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտայ ին ճնշում մ. (հՊմ)	Ամիսներ	Կրկնել իու թ ու նը, %								Անհողմու թ ու նների կրկնել իու թ ու նը, %	Միջին ամսական արագու թ ու նը, մ/վ	Միջին տարեկան արագու թ ու նը, մ/վ	Ու ժեղ քամիներով օրերի քանակը	Հաշվարկայ ին արագու թ ու նը, մ/վ որը հնարավոր է սեկ անգամ "ո" սարին երի ընթացքու մ
			Հյ ու սիսայ ին	Հյ ու սիս-Արևելյ ան	Արևելյ ան	Հարավ-Արևելյ ան	Հարավ	Հարավ-Արև մայ ան	Արև մայ ան	Հյ ու սիս-Արև մայ ան					
Եղվարդ	866,0	Հու նվար	6	48	11	3	15	6	9	2	40	1,1	2,6	29	24,29,34
			1,7	1,8	1,7	1,5	1,7	1,9	1,8	1,7					

		Ասիլ	5	48	7	3	17	10	8	2	23	2,6			
			3,0	3,8	2,7	2,4	2,4	2,8	2,7	2,1					
		Հուլիս	6	73	4	1	7	4	4	1	11	4,8			
			4,9	5,5	4,9	1,7	3,0	2,5	3,0	1,8					
		Հոկտեմբեր	5	55	6	3	16	8	6	1	31	1,9			
			2,7	3,1	2,1	1,9	1,9	2,3	1,8	2,2					

Տարվա ցուրտ ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C						Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	Մթնոլորտային տեղումները և գրունտի սառչման խորությունը	Քամի			
	Ամենացուրտ օրվա ապահովվածությունը, %	Ամենացուրտ հնգօրյակի ապահովվածությունը, %	Ամենացուրտ ժամանակաշրջանի միջինը	Բացարձակ նվազագույնը	Ամենացուրտ ամսվա միջին օրական տատանումը	Տևողությունը, օր						
						Միջին ջերմաստիճանը ժամանակաշրջանի միջին օրական ջերմաստիճանով ոչ բարձր, °C						
						0 8 10	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնն ըստ ուղղությունների, հունվարին, մ/վ
1	2		3	4		6	7	8	9	10	11	12
Եղվարդ	-23, -20	-20,-17	-5,2	-33	9,0	88 161 179	73	66	184	79	ՀսԱրլ	1,8
						-3,6 -0,2 0,8						
Տարվա տաք ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը												
Եղվարդ	30	31	39	29,9	12,9	48	33	252	53	ՀսԱրլ	5,7	

Մթնոլորտային օդ

Մթնոլորտային օդի մոնիտորինգի դիտակայան Արամուսի բազալտի հանքավայրի կամ հարակից Կամարիս բնակավայրի տարածքում չկա: Համաձայն «ՀՀ բակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույց-ձեռնարկի Արամուս համայնքում օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են. փոշի՝ 0.2 մգ/մ³, ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ³, ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ³, ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ³:

Ջրային ռեսուրսներ

Տարածքի խոշորագույն ջրային երակը Հրազդան գետն է, որը հանրապետության խոշորագույն ու կարևորագույն գետերից է՝ Արաքսի ձախ վտակը: Ունի 141կմ երկարություն: Ավազանի մակերեսը 2650կմ² է (առանց Սևանա լճի): Այն սկիզբ է առնում Սևանա լճից, հոսում հարավ-արևմտյան ընդհանուր ուղղությամբ, անցնում Գեղարքունիքի, Կոտայքի մարզերով, Երևան քաղաքով, Արարատի մարզով և թափվում Արաքսը: Վերին հոսանքում մոտ 20կմ հոսում է դեպի արևմուտք՝ այդ ընթացքում առաջացնելով գալարներ, միջին հոսանքում անցնում է նեղ ու խոր (120-150մ) կիրճով, ստորին հոսանքում ուղղվում է դեպի հարավ-արևելք, դուրս գալիս Արարատյան դաշտ, դառնում հանդարտահոս ու ծովի մակարդակից 820մ բարձրության վրա լցվում Արաքսը: Գետի ընդհանուր անկումը կազմում է 1100 մ: Մնումը հիմնականում ստորգետնյա (51%) և հալոցքային (37%) է, վարարումը՝ գարնանը, հորդացումները՝ ամռանն ու աշնանը:

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարության Շրջակա միջավայրի մոնիտորինգի և տեղեկատվության կենտրոնի տվյալների Հրազդան գետից վերցված փորձանմուշներում գերազանցել են նիտրիտ ամոնիում, սուլֆատ իոնների, ԹԿՊ5, ԹՔՊ-ի, ալյումինի, վանադիումի, քրոմի, մանգանի, պղնձի և սելենի սահմանային թույլատրելի նորմաները:

Հողեր

Արամուսի բազալտի հանքավայրի և դրա տեղամասերի շրջանում զարգացած են լեռնաշագանակագույն հողերը :

Նախալեռնային գոտում տարածված են շագանակագույն, մեծ մասամբ քարքարոտ, էրոզացված հողերը, որոնց մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%, որից 18.8%-ը՝ թույլ քարքարոտ, 17.0%՝ միջակ քարքարոտ, 34.5 %-ը՝ ուժեղ քարքարոտ:

Շագանակագույն հողերն ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա:

Հողաշերտի հզորությունը միջին հաշվով տատանվում է մինչև 20սմ-ի սահմաններում, ռելիեֆի իջվածքային մասերում հաճախ այն հասնում է 65-70սմ-ի:

Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին:

Կախված ռելիեֆի պայմաններից և էրոզիայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողեր:

Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով:

Այս տիպի հողերը բնութագրվում են հետևյալ քիմիական և ջրաֆիզիկական հատկություններով (միջինացված տվյալներ):

Աղյուսակ 2.


Հողատիպը և ենթատիպը	Խորությունը, սմ	Տոկոսներով			Կլանված կատիոնների գումարը, մ/էկվ 100գ հողում	pH-ը ջրային քաշվածքում
		հումուս	CO ₂	գիպս CaSO ₄		
Մուգ-շագանակագույն	0-15	3.2	1.4	0.0	33.1	7.9
	15-34	2.1	7.3	0.0	31.5	8.4
	34-73	1.6	16.5	0.1	30.1	8.3
	73-105	1.0	15.7	0.1	29.7	8.3
	105-155	0.8	17.7	0.1	25.8	8.4
Բաց-շագանակագույն	0-25	2.4	4.4	0.0	29.4	8.1
	25-39	1.4	8.4	0.5	28.8	8.4
	39-85	1.2	15.4	1.0	24.4	8.2

Շագանակագույն հողերի ծավալային զանգվածը տատանվում է 1.24-1.48գ/սմ³- ի, տեսակարար զանգվածը՝ 2.50-2.65գ/սմ³-ի, ընդհանուր ծակոտկենությունը՝ 4.38- 52.1,

խոնավությունը՝ 20-30%-ի սահմաններում: Այս տիպի հողերը պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ՝ մինչև 10-25%, որն առաջ է բերում հողերի ցեմենտացիա և քարացում: Հողը և փխրուկաբեկորային մայրատեսակը հարուստ են հողալկալի մետաղներով, ֆոսֆորական թթվով և կալիումով: Անմշակ հողերում ստրուկտուրանխոշոր կնձկային է:

Տեղամասի մի հատվածում առկա են ձևավորված ենթակառուցվածքներ, ճանապարհներ (նկար 7): Մակերեսը քարքարոտ է: Հողային ծածկույթը պահպանվել է տարածքում առանձին հատվածներում: Հողերը ներկայացված են բաց շագանակագույն գենետիկական տիպով: Բնութագրվում են ցածր որակական հատկություններով, գրանցվել է կարբոնատների զգալի պարունակություն (գիպսի պարունակությունը մինչև 0.25%):

Հողերը ծանր կավավազային մեխանիկական կազմ ունեն: Հումուսի պարունակությունը կազմում է 1.3%:



Նկար 6. Հողերի բնական տիպերի տարածման սխեմատիկ քարտեզ

■ Արամուսի բազալտի հանքավայր

Քուսական և կենդանական աշխարհ

Շրջանի բուսական աշխարհը ներկայացված է Գեղամա և Երևանյան ֆլորիստական շրջանների միջև ընկած սահմանային, միջին բարձրության լեռնային տափաստանային զոնայի տարածքներին բնորոշ բուսականության տեսակներով, որոնցում գերակշռում են հատիկավոր և հատիկատարազգի ներկայացուցիչները: Աճում են նաև օշինդրա-էֆեմերային տեսակներ՝ *Artemisia Fragrans* Willd., *Kochia Prostrata* (L.) Schrad., *Capparis spinosa* Willd., *Ceratoides papposa* Botsch. Et Ikonn., *Atraphaxis spinosa* L., *Rhamnus pallasii* Fisch. Et Mey., *Tanacetum argyrophyllum* (C.Koch) Tzvel., *Poa bulbosa* L. *Bromus*, *Aegilops*, *Eremopyrum*, *Alyssum*, *Aeluropus littoralis* (Gouan) Parl.:

Շրջանում հաճախ հանդիպող բուսական տեսակներն են.

1. Արեղախոտ քիստաբաժակ - *Stachys atherocalyx*
2. Անթառամ կարմրավուն- *Helichrysum rubicundum*
3. Առվույտ ցանովի - *Medicago sativa*
4. Աստղագազար արևելյան - *Astrodaucus orientalis*
5. Ավելաբույս գետնատարած - *Kochia prostrata*
6. Ավելուկ գանգուր- *Rumex crispus*
7. Ավելուկ պալարավոր- *Rumex tuberosus*
8. Ավելուկ վահանաձև - *Rumex scutatus*
9. Արճախոտ եվրոպական - *Plumbago europaea*
10. Բալենի ալեհեր - *Cerasus incana*
11. Բալենի մահալեբի - *Cerasus mahaleb*
12. Բավեղ արևելյան - *Phlomis orientalis*
13. Բարդի սև - *Populus nigra*
14. Բարդի նրբագեղ - *Populus gracilis*
15. Բերենիկե արևելյան- *Veronica orientalis* և այլն:

Ընդերքօգտագործման նպատակով հատկացվելիք հողերում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսական տեսակներ կան հանքավայրից բավականին հեռու, օրինակ՝ Տերեփուկ երևանյան/*Centaurea erivanensis* (5.4 կմ), Բելլավիա երկարասունակ/*Bellevalia longistyla* (5.6 կմ), Կորնգան հայաստանի/*Onobrychis hajastana* (5.3 կմ), Ձազախոտ էգինյա/*Erysimum eginense* (5.2 կմ) հեռավորության վրա, իսկ ՀՀ կենդանիների Կարմիր

գրքում գրանցված կենդանական տեսակներից՝ Հայկական իժ կամ Ռադդեի իժ/Armenian or Radde's viper, Հայկական լեռնատափաստանային իժ/Armenian steppe viper հանդիպում են հանքավայրից 7.3-8.4 կմ հեռավորության վրա:



Koeleria albovii




Tanacetum argyrophyllum

Շրջանում տարածված են միջին բարձրության լեռնային տափաստաններին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Կաթնասունները առավել կերպով ներկայացված են կրծողներով, որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ: Բազմազան է թռչնաշխարհը, հանդիպում են սպիտակախածի կեռնեխ, լեռնային խաղտոտիկ և կիսասպիտակավիզ ճանճորս: Բազմաթիվ տեսակներով ներկայացված են մորեխները (սովորական իտալական մորեխ, ձիուկ, մթնաթև, ծղրիդ): Լայն տարածված են բզեզները և թիթեռները (շաղգամ, կաղամբի ճերմակաթիթեռ): Սողունների և երկկենցաղների ֆաունան աղքատիկ է: Երկկենցաղներից տարածքում հնարավոր է հանդիպել միայն Կանաչ դոդոշի (*Bufo viridis*):

Արամուսի հանքավայրից հայցվող նախնական դիտարկումների արդյունքներով չեն արձանագրվել նաև կենդանիների և թռչունների բներ, բնադրավայրեր, որջեր :

Նկարագրվող տարածքում տարածված են միջին բարձրության լեռնային տափաստաններին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Այս լանդշաֆտային զոնայում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ: Կաթնասունները առավել կերպով ներկայացված են կրծողներով, որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ:



- | | |
|--|--|
| <p>Մարգագիտնադաշտային բուսականություն</p> <p>3 Մասնակցությամբ՝ <i>Festuca versicolor</i> Tausch, <i>F. ovina</i> L., <i>F. valesiaca</i> Gaudin, <i>Phleum pratense</i> L., <i>Hordeum violaceum</i> Boiss. et Huet, <i>Carex humilis</i> Leys, <i>Trifolium ambiguum</i> L.</p> <p>Անբառային բուսականություն</p> <p>5 Կաղնուտներ, մասնակցությամբ՝ <i>Quercus macranthera</i> Fisch. et Mey. ex Hohen., <i>Q. boissieri</i> Beut., <i>Q. araxina</i> (Trautv.) Grossh</p> <p>6 Անտառային խառը մշակարույն, մասնակցությամբ՝ <i>Pinus pallasiana</i> D. Don, <i>P. banksiana</i> Lamb., <i>Fraxinus excelsior</i> L., <i>Hippophae rhamnoides</i> L., տեսակներ <i>Salix</i>, <i>Acacia</i>, <i>Ulmus</i> և ավազոտային տարախոտերի</p> <p>Քսերոֆիտ անբառային բուսականություն</p> <p>7 Գիհու խառը, մասնակցությամբ՝ <i>Juniperus polycarpus</i> C. Koch, <i>J. oblonga</i> Bieb., <i>J. hemisphaerica</i> J. et C. presl., <i>J. foetidissima</i> Willd., <i>J. Sabina</i> L., <i>Ephedra procera</i> Fisch. et Mey.</p> | <p>Տափաստանային բուսականություն</p> <p>9 Հացազգային, տարախոտա-հացազգային, մասնակցությամբ՝ <i>Festuca valesiaca</i> Gaudin, <i>F. ovina</i> L., <i>Koeleria albiovii</i> Domin, <i>K. cristata</i> (L.) Pers., <i>Bothriochloa ischaemum</i> (L.) Keng, <i>Stipa capillata</i> L., <i>S. lessingiana</i> Trin. et Rupr., <i>S. tirsia</i> Stev., <i>Elytrigia trichophora</i> (Link) Nevski, <i>Galium verum</i> L., տեսակներ <i>Agropyron</i>, <i>Andropogon</i>, <i>Scabiosa</i>, <i>Veronica</i>, <i>Artemisia</i>, <i>Achillea</i>, <i>Astragalus</i></p> <p>Կիսաանապատային բուսականություն</p> <p>11 Օշինդրա-էֆեմերային, մասնակցությամբ՝ <i>Artemisia fragrans</i> Willd., <i>Kochia prostrata</i> (L.) Schrad., <i>Capparis spinosa</i> Willd., <i>Ceratoides papposa</i> Botsch. et Ikonn., <i>Atraphaxis spinosa</i> L., <i>Rhamnus pallasii</i> Fisch. et Mey., <i>Tanacetum argyrophyllum</i> (C. Koch) Tzvel., <i>Poa bulbosa</i> L., <i>Bromus</i>, <i>Aegilops</i>, <i>Eremopyrum</i>, <i>Alyssum</i>, <i>Aeluropus littoralis</i> (Gouan) Parl.</p> <p style="text-align: center;">○ ԲԱԶԱԼՏԻ ՀԱՆՔԱԿԱՅՐ</p> |
|--|--|

Նկար 7

■ Արամուսի բազալտի հանքավայր

Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ

Արամուսի բազալտի հանքավայրի շրջանում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան:

Բուն հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Այստեղ չեն արձանագրվել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելա- և ապրելավայրեր:

Ընդհանուր առմամբ Արամուսի տարածաշրջանում հայտնի են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները.

- ականթ դիոսկորեանման – կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է, հայտնի է մեկ պոպուլյացիա, որը աճում է Հատիս լեռան ստորոտում, տեղամասից ավելի քան 5կմ հեռավորության վրա,

- ձագախոտ էգինյան – վտանգված տեսակ է, լոկալիտներից մեկը գտնվում է Զառ գյուղի մոտ, տեղամասից մոտ 6.7կմ հեռավորության վրա,

- գառնառվույտ լազիստանյան – վտանգված տեսակ է, լոկալիտներից մեկը գտնվում է Հատիս գյուղի մոտ, տեղամասից 12կմ հեռավորության վրա:

ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակների հայցվող տեղամասի տարածաշրջանում հատնի են. տոնական գնայուկ, նեղ սևամարմին և հայկական սևամարմին – հազվագյուտ տեսակներ են, հայտնաբերված է Զրվեժ գյուղի մոտ, տեղամասից մոտ մոտ 5կմ հեռավորության վրա, ավեքսանոր առագաստաթիթեռ և ավրորինա դեղնաթիթեռ – խոցելի տեսակներ են, հայտնաբերված է Զրվեժ գյուղի մոտ, տեղամասից մոտ 5կմ հեռավորության վրա:

Ինչպես հետևում է ներկայացված տեղեկատվությունից թե բույսերի, թե կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակների աճելա- և ապրելավայրերը գտնվում են հայցվող տեղամասից մեծ հեռավորությունների վրա: Տեղամասից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքները որևիցե կերպ չեն ազդի Կարմիր գրքում գրանցված տեսակների քանակության և արելաների մակերեսների վրա :

ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ

տարածքի բնության հուշարձանների ցանկը: Համաձայն նշված փաստաթղթի, ՀՀ Կոտայքի մարզում գտնվում են բնության հետևյալ հուշարձանները.

«Անանուն» խզվածքներ	Եղվարդ ավանից հվ, ավազահանքի մոտ
Թագավորանիստ խարամային կոնի պեմզաների և խարամների կոնտակտ	Եղվարդ քաղաքից 3.5 կմ դեպի հարավ
«Թագավորանիստ» խարամային կոն	Եղվարդ ավանից 3 կմ հվ, Աշտարակ տանող խճուղու ձախ կողմում
«Պեոլիտե փիղ» քարե քանդակ	Չարենցավան քաղաքից 2 կմ հվ, քարահանքի մոտ
«Անանուն» բյուրեղային թերթաքարերի ու վերին կավճի կրաքարերի կոնտակտ	Բջնի գյուղի արևմտյան ծայրամասում
«Ծակ քար» բնական թունել	Բջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախ ափին
«Բազալտե երգեհոն» սյունաձև բազալտներ	Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
«Անանուն» քարայր սյունաձև բազալտներում	Գառնի գյուղից մոտ 1,0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
«Անանուն» լանջային էրոզիա	Ազատ գետի աջակողմյան ափերին
«Անանուն» լավային ծալքեր	Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
«Անանուն» խորշեր	Գողթ գյուղից մոտ 3.0 կմ հս-արլ
«Հատիս» հրաբուխ	Չովաշեն գյուղից 2.0 կմ արմ
«Ավազան» հրաբխային գմբեթ	Կարենիս գյուղից 1.5 կմ հս-արլ
«Կարենիս» հրաբխային գմբեթ	Կարենիս գյուղից 0.5 կմ հս-արլ
«Անանուն» ապարների բնորոշ մերկացում	Նուռնուս գյուղի և Արգելի ՀԷԿ-ի միջև
«Անանուն» օբսիդիանի ելքեր	Ջրաբեր գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, Երևան-Սևան խճուղու աջ կողմում
«Անանուն» քարե կուտակումներ	Քաղսի գյուղի հվ-արմ եզրին, Հրազդանի կիրճում
«Գութանասար» հրաբուխ	Ֆանտան գյուղից 3 կմ հվ
«Լեռնահովիտ» քարային կուտակումներ	Ֆանտան գյուղից 4-5 կմ հվ-արլ, «Թեգխարաք» գյուղատեղիի մոտ
Ձորաղբյուրի (Մանգյուսի) բրածո ֆլորա	գյուղ Ձորաղբյուր

Ինչպես հետևում է ներկայացված տեղեկատվությունից, Արամուսի բազալտի հանքավայրի տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն: Բնության

հուշարձանները գտնվում են տեղամասի տարածքից 4.1-ից 23 կմ հեռավորության վրա:

Մարզում առկա են նաև ջրաերկրաբանական-5, ջրագրական-4, բնապատմական-1 և կենսաբանական-3 հուշարձաններ՝ հիմք ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում:

Բնապատմական՝

«Ողջաբերդ» բնապատմական համալիր	Կոտայքի մարզ, Ողջաբերդ գյուղի հս-արլ մասում
--------------------------------	---

Կենսաբանական՝

«Ռեիկտային կրկես քյորոլի լեռան մոտ»	Կոտայքի մարզ, Արտավազ գյուղի մոտ
«Ալպյան գորգ»	Կոտայքի մարզ, Մեղրաձոր-Ֆիոլետովո գրունտային ճանա- պարհի ամենաբարձր մասում (Փամբակ լեռնաշղթայի Ամպա-սարի գագաթային մասում, ծ.մ-ից 300 մ բարձրության վրա)
«Թանթրվենի, Տիգրանի»	Կոտայքի մարզ, Արզնի առողջարանի մոտ, Հրազդան գետի ափին, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա

Ջրագրական՝

«Սագերի» լիճ	Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4կմ հս
«Վիշապա» լիճ	Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ արլ
«Բազմալիճք» լիճ	Կոտայքի մարզ, Սևաբերդ գյուղից մոտ 3 կմ հս
«Լուսնալիճ» լիճ	Կոտայքի մարզ, Սևաբերդ գյուղից մոտ 7 կմ հս-արլ

Ջրաերկրաբանական՝

«Հաղարտանք» աղբյուր	Կոտայքի մարզ, Հրազդան քաղաքի Վանատուր (Աթարբեկյան) թաղամասի արլ ծայրամասում, 1.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1755 մ բարձրության վրա
«Համով» աղբյուր	Կոտայքի մարզ, Ակունք գյուղի հվ-արմ ծայրամասում, եկեղեցու մոտ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա
«Քաղցր» աղբյուր	Կոտայքի մարզ, Արզնի գյուղից 150 մ հվ-արմ, Հրազդան գետի ձախ ափին, ծ.մ-ից 1300 մ բարձրության վրա
«Ձորի» աղբյուր	Կոտայքի մարզ, Գողթ գյուղից 0.3 կմ հս-արլ, Գողթ գետի աջ ափին, ծ.մ-ից 1580 մ բարձրության վրա
«Ավազան» աղբյուր	Կոտայքի մարզ, Կաթնաղբյուր գյուղից 0.3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա

Վերոնշյալ հուշարձանները գտնվում են հանքավայրից ավելի քան 9կմ հեռավորության վրա:

Հանքավայրի շրջանում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան:

Նկար 8. Բնության հատուկ պահպանվող տարածքներ




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ			
h/h	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՏԱՐԵԹԻՎԸ	ՁԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔԸ (հա)
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՈՅՆԵՐ			
1.	«Էրերունի»	1981	89
2.	«Ժուրովի ամառա»	1958	29 196
3.	«Շիկանող»	1958	10 330
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԵՐ			
1.	«Գիլիջան»	1958 - արգելոց, 2002 - ից ազգային պարկ	ավելի քան 30 000
2.	«Սևան»	1978	150 100
«Սևան» ազգային պարկի արգելոցային գոտիներ			
1	Նորաշենի	4	Կարճաղբյուրի
2	Նորատուսի	5	Գիլիլի
3	Լիճի	6	Արտանիշի
«Սևան» ազգային պարկի պահպանման գոտի			
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐ			
1.	Գյուլագարակի սոճու	1958	2 576
2.	Իջևանի	1971	7 800
3.	Արցախյան	1958	40
4.	Գամձարաղի	1971	6 800
5.	Մարգարիտի	1959	5 000
6.	Այնաբաթի կենտ պուրակ	1959	25
7.	Գետիկի	1971	6 000
8.	Գիլու նոսրանտառային	1958	3 312
9.	Մրտավարդենու	1959	10 000
10.	Հանրավանի ջրարանական	1981	9 350
11.	Արգական-Մեղրածորի	1971	14 500
12.	Բանրախի սոճու	1959	4
13.	Արագածի ալպյան	1959	300
14.	Որդան կարմրի	1987	200
15.	Գոռավանի ավազուտներ	1959	200
16.	Եղեգնաձորի	1972	4 200
17.	Ջերմուկի	1958	3 865
18.	Ջերմուկի ջրարանական	1981	18 000
19.	Հերիկի նոսրանտառային	1958	6 139
20.	«Սև լիճ»	1987-ից արգելոց, 2001-ից՝ արգելավայր	240
21.	Գոլիսի	1971	1 900
22.	Մոսու պուրակ	1958	60
23.	Բողաբարի	1989	2 728

Պետական արգելոցների և ազգային պարկերի կառավարման կենտրոնական գրասենյակներ





■ Արամուսի բազալտի հանքավայր

Նկարագրվող տարածաշրջանում երկրաշարժերի հնարավոր ուժգնությունը կազմում է 8-9 բալ և ավելի:



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

ԵՐԿՐԱՇԱՐՇԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒժԳՆՈՒԹՅՈՒՆ (Մ) ԵՎ ԳԵՏՆԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ ԱՐԱԳԱՅՈՒՄՆԵՐ (Գ)
(500 ՏԱՐՈՒՄ ՉԳԵՐԱՋԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 90 %)

Մ		Գ	
	10 և ավելի		0,4 – 0,5
	9		0,3 – 0,4
	8 - 9		0,2 – 0,3
	8		0,1 – 0,2

- Նկար 9. Սեյսմիկ շրջանացման սխեմատիկ քարտեզ Արամուսի բազալտի հանքավայր

7. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ենթակառուցվածքներ

Ինչպես արդեն նշվել է, Արամուսի բազալտի հանքավայրից հայցվող տեղամասը վարչական առումով ընդգրկված է ՀՀ Կոտայքի մարզի տարածքում, Արամուս համայնքում:

Կոտայքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական մասում, ծովի մակերևույթից մոտ 900-2500մ բարձրության վրա: Մարզի տարածքը կազմում է 2086 քառ.կմ, որը ՀՀ տարածքի 7%-ն է: Սահմանակից է Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու, Արարատի, Արագածոտնի մարզերին և մայրաքաղաք Երևանին: Մարզն ընդգրկում է երեք տարածաշրջաններ՝ Հրազդանի, Աբովյանի և Նաիրիի:

Համայնքների թիվը 67 է, որից քաղաքային՝ 7, գյուղական՝ 60: Մարզկենտրոնը Հրազդան քաղաքն է:

Կոտայքի մարզի գյուղատնտեսական հողատեսքերն ընդգրկում են մարզի ընդհանուր տարածքի 74.1 %-ը (154584.3 հա), որոնք կազմում են Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի 7.6%-ը: Մարզի գյուղատնտեսական հողատեսքերի մեջ մեծ կշիռ ունեն արոտավայրերը (51.1%) և վարելահողերը (24.4%), որոնք համապատասխանաբար կազմում են Հանրապետության արոտավայրերի 7.5%-ը և վարելահողերի 8.5%-ը:

Մարզի ընդհանուր անտառային ֆոնդը կազմում է 22907.5 հա կամ մարզի տարածքի 11.0 %-ը, որը Կոտայքի տարածքի համեմատ համարժեք է հանրապետության ցուցանիշին (11.2%): Մարզի անտառները լեռնային են, ունեն ընդգծված հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն, ինչպես նաև աչքի են ընկնում բուսական տեսակների բազմազանությամբ: Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների (այդ թվում՝ արգելավայրեր, բնության հուշարձաններ) 2.6 %-ը (8694.3 հա) գտնվում է Կոտայքի մարզում, որը կազմում է մարզի տարածքի շուրջ 4.2%-ը:

Մարզը հարուստ է օգտակար հանածոների պաշարներով: Առկա են ոսկու, այլումինի, պղինձ- մոլիբդենի, երկաթի, պեռլիտի, մարմարի, գրանիտի, լիթոիդային պեմզայի, նեֆելինային սիենիտների, անդեզիտաբազալտների, հրաբխային խարամների, քարաղի, զանազան շինարարական նյութերի հանքավայրեր: Մարզում առկա են հանքային ջրերի 3 խոշոր հանքավայրեր՝ Բջնիի, Արզնիի և Հանքավանի, որոնք բուժական նպատակներով օգտագործելու մեծ հնարավորություններ ունեն: Նշված հանքավայրերից առաջին երկուսը շահագործվում են թերծանրաբեռնվածությամբ, իսկ Հանքավան հանքային ջրի նկատմամբ դեռևս հետաքրքրություն չկա:

Կոտայքի մարզում բնական աղետներից առավել վտանգ են ներկայացնում երկրաշարժերը, սողանքները, սելավները, գարնանային վարարումների հետևանքով առաջացած ջրհեղեղները, քարաթափվածքները, ուժեղ քամիները, կարկուտը, ցրտահարությունը, մերկասառույցը, ձնաբուքը, մառախուղը, երաշտները և անտառային հրդեհները: Մարզի տարածքում ավտոճանապարհներին սպառնացող քարաթափումները գտնվում են Երևան-Սևան մայրուղու 37-րդ կմ, Հրազդան-Բջնի, Չարենցավան-Արգել, Արզնի-Նոր Գեղի, Ողջաբերդ-Գառնի-Գեղարդ հատվածներում, առկա սողանքային

գոտիներից առավել ակտիվ և վտանգավոր գոտիները գտնվում են հիմնականում Ողջաբերդի, Հացավանի, Հանքավանի տարածքներում:

Կոտայքի մարզի մշտական բնակչությունը կազմում է 253900 մարդ /2016թ. հունվարի 1-ի տվյալներով/, որից՝ քաղաքային՝ 137900 մարդ (54,3%), գյուղական՝ 116000 մարդ (45.7%): Մարզի բնակչությունը կազմում է հանրապետության բնակչության 8.5%-ը: Ազգաբնակչության 97,6 %-ը հայեր են: Մարզում բնակվում են նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ՝ հիմնականում եզդիներ, ասորիներ, քրդեր, հույներ:

Մարզի մշտական բնակչության 48.2%-ը կազմում են տղամարդիկ, 51.8%-ը՝ կանայք: Մարզի բնակչության մեջ գերակշռում են 30-62 տարեկանները (44.8 %), ընդ որում տղամարդիկ կազմում են 43.4%, կանայք՝ 46.1%, իսկ երիտասարդները (15-29 տարեկան) կազմում են ազգաբնակչության 23.3%-ը, համապատասխանաբար՝ տղամարդիկ՝ 24.3 %, կանայք՝ 22.4 %:

Կոտայքի մարզի բնակչության կրթական մակարդակն ունի հետևյալ պատկերը՝ բարձրագույն կրթություն ունեցողներ՝ 15,6%, միջին մասնագիտական՝ 15,6%, նախնական մասնագիտական՝ 4,5%, միջնակարգ՝ 37,6%, հիմնական՝ 12,5%, տարրական՝ 8,7% և չունի տարրական կրթություն՝ 5,5%: Քաղաքներում գյուղերի համեմատաբար բարձր է բարձրագույն կրթության մակարդակը՝ 66%-ով, միջին մասնագիտական կրթության մակարդակը՝ 60%-ով:

Կոտայքի մարզը գտնվում է հանրապետության կենտրոնական մասում, սահմանակից է 5 մարզերի և Երևան քաղաքի հետ, մարզկենտրոնից մինչև մայրաքաղաք հեռավորությունն ընդամենը 50 կմ է: Մարզով են անցնում Մ-4 Երևան- Սևան-Իջևան- Ադրբեջանի սահման և Բալախովիտ-Մասիս (Երևանը շրջանցող) միջպետական ճանապարհները (56.18կմ): Մարզի տարածքով են անցնում Երևան- Սևան-Շորժա (68 կմ) և Հրազդան-Իջևան (20 կմ) երկաթուղիները:

Մարզի ավտոճանապարհներին զգալի է նաև տարանցիկ երթուղիների թիվը: Մարզում բեռնափոխադրումները և ուղևորափոխադրումները հիմնականում իրականացվում են ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտի միջոցով: Ավտոմոբիլային փոխադրումները մարզում կազմում են ընդհանուր փոխադրումների շուրջ 95%-ը, ինչով և պայմանավորված է ավտոմոբիլային ճանապարհների գերակա դերը

տնտեսությունում:

Մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապը ապահովվում է հանրապետություն գործող բոլոր օպերատորների կողմից, այն է՝ ԱրմենՏել ՓԲԸ (Beeline«ապրանքանիշ), Ղ-Տելեկոմ ՓԲԸ (ՎիվաՍել/ՄՏՍ ապրանքանիշ) և ՅՈՒԲՈՍ (Ucom ապրանքանիշ): Մարզի բնակավայրերը 100%-ով ապահովված են ինտերնետ ծածկույթով: Ինտերնետի որակը հիմնականում բավարար է:

Մարզում լարային հեռախոսակապ ապահովում են ԱրմենՏելը և Ռոստելեկոմը՝ 48 համայնքներում: Մարզի բնակավայրերում գործում են «Հայփոստ» ՓԲԸ-ի 66 փոստային բաժանմունքներ:

Մարզի բոլոր համայնքների բնակչությունը հնարավորություն ունի բավարար որակով ընդունելու 10-ից ավելի հեռուստաալիք: Գործում է Կոտայք TV մարզային հեռուստաընկերությունը: Մարզի ամբողջ տարածքն ընդգրկված է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում: Հեռարձակվում է նաև Հանրային ռադիոն, որը հասանելի է մարզի բոլոր բնակավայրերում:

Մարզի համայնքներում ջրամատակարարումն իրականացվում է բաց աղբյուրներից, կապտաժներից՝ ինքնահոս և մեխանիկական եղանակներով: Չնայած կատարված աշխատանքներին, կան դեռևս լուծում պահանջող հիմնախնդիրներ՝ Լեռնանիստ համայնքը չունի ջրամատակարարման ցանց:

Մարզի 29 համայնքներում գոյություն ունեն կոյուղու հեռացման գործող համակարգեր, որոնք սպասարկում են մարզի բնակչության 53%-ին: Ներկայումս մարզի կոյուղու համակարգ ունեցող բոլոր բնակավայրերի կոյուղագծերը գտնվում են անմխիթար վիճակում և միացված են հոսող գետերին, ջրամբարներին:

Հրազդանի տարածաշրջանում առկա է կեղտաջրերի մաքրման չգործող կայան, որը մինչև 1992թ-ը իրականացրել է Ծաղկաձորի, Հանքավանի և Հրազդանի կոյուղաջրերի կենսաբանական մաքրում:

Մարզով են անցնում մագիստրալ գազատարեր, առկա են գազի ստորգետնյա պահեստարաններ: 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզի 67

համայնքներից գազաֆիկացված է 62-ը, որտեղ բնակվում են մարզի բնակչության 98,6%-ը: Գազաֆիկացված չեն Հանքավան, Սևաբերդ, Ողջաբերդ, Սարալանջ, Բուժական համայնքները, այս համայնքներում բնակվում են մարզի բնակչության 1,4%-ը: Նշված

համայնքներից Հանքավան համայնքի գազաֆիկացումը կնպաստի Հանքավանի ջրամբարի հարակից և համայնքի տարածքներում առկա հանգստյան տների, առողջարանների կողմից առավել մատչելի էներգետիկ ռեսուրսի օգտագործման համար: Կոտայքի մարզի գազի բաշխիչ ցանցի միագիծ երկարությունը կազմում է 1051 կմ:

Հողերի տնտեսական յուրացման բնութագիր

Արամուսի բազալտի հանքավայրից հայցվող տեղամասը ներառված է Արամուս համայնքի վարչական տարածքում:

Արամուս համայնքը սահմանակից է արևմուտքից՝ Մայակովսկի, հյուսիսից՝ Ձորաղբյուր, հյուսիս-արևելքից՝ Զովք և Կամարիս, արևելքից՝ Կաթնաղբյուր, հարավ-արևելքից՝ Ակունք, հարավից՝ Նոր Գյուղ համայնքներին:

Արամուս համայնքի վարչական տարածքը կազմում է 1499,11 հա, որից գյուղատնտեսական նշանակություն ունեն 1075,85 հա-ը, բնակավայրերը զբաղեցնում են 238,15 հա, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտները՝ 101,37 հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտները՝ 16,67 հա, հատուկ պահպանվող տարածքները՝ 53,50 հա, ջրային հողերը՝ 13,57 հա, պետական սեփականություն հանդիսացող հողերը՝ 78 հա:

Համայնքի բնակչության 52% կազմում են տղամարդիկ և 48% կանայք:

Գյուղում գործում են ավիոհուլային խմիչքների, սնկերի, սննդամթերքի, քարի մշակման, հանքարդյունահանման և արտադրական կազմակերպություններ: Անհատ ձեռնարկատերերի կողմից կազմակերպվում են հացի և թարմ այլուրե հրուշակեղենի, մետաղապլաստե դռների ու լուսամուտների և այլ արտադրություններ: Արտադրված արտադրանքի սպառման հիմնական շուկան Հայաստանի Հանրապետությունն է:

Համայնքում զարգանում են առևտրի և սպասարկման փոքր և միջին կայուն ձևերը: Բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունը, անասնապահությունը, արտադրությունը, մատուցվող ծառայություններն ու առևտուրն է:

«Սուսի-Սթոուն» ՍՊԸ կողմից բազալտի արդյունահանման նպատակով հայցվող տարածքը ներկայացված է 2,2 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրերով, մնացած մասը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ

արտադրական նշանակության հողամասեր են:

Օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների բնույթը և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը ներկայացվել են Կամարիս համայնքի բնակիչներին: Նախնական գնահատման հայտին կից ներկայացվում են հանրային քննարկումների արձանագրությունը և տեսաձայնագրությունը:

Պարմության, մշակութային հուշարձաններ

ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1793-Ն և 2007 թվականի մարտի 15-ի թիվ 385-Ն որոշումներով հաստատվել է ՀՀ Կոտայքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը: Արամուս համայնքի տարածքում նշված են պատմության և մշակույթի հետևյալ հուշարձաններ (աղյուսակ 3) :

Աղյուսակ 3.

Անվանումը	Ժամանակաշրջանը	Տեղադիրքը
1	2	3
ԱՄՐՈՑ-ԲՆԱԿԱՏԵՂԻ	Ք.ա. 2 հազ.-2 դ.	գյուղից 1 կմ հվ-ամ
Դամբարանադաշտ	Ք.ա. 2 հազ.-8 դ.	բլրալանջին
ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	12-20 դդ.	գյուղի հվ-ատ մասում
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	13-14 դդ.	
Խաչքար	16-17 դդ.	
Խաչքար	16-17 դդ.	
Տապանաքար	15-16 դդ.	
ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 0.5 կմ հվ-ատ
ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 0.5 կմ ատ
ԵԿԵՂԵՑԻ ՍԲ. ՆՇԱՆ	6 դ.	գյուղի մեջ
Բնակելի շինություններ	19 դ.	եկեղեցու մոտ
Խաչքար	10-11 դդ.	եկեղեցու մոտ
Խաչքար	10-11 դդ.	
ԵԿԵՂԵՑԻ ՍԲ. ՀԱԿՈԲ	1867 թ.	գյուղի կենտրոնում
Խաչքար	9-10 դդ.	հենած է եկեղեցու պատին
Խաչքար	13 դ.	ազուցված է եկեղեցու ատ ճակատին
Խաչքար	13-14 դդ.	ազուցված է եկեղեցու ատ ճակատին

Խաչքար	13-14 դդ.	ագուցված է եկեղեցու ամ ճակատին
Խաչքար	14-15 դդ.	ագուցված է եկեղեցու ամ ճակատին
Խաչքար	14-15 դդ.	ագուցված է եկեղեցու ամ ճակատին
Խաչքար	14-15 դդ.	խորանի ձախ կողմում
Խաչքար	15 դ.	ագուցված է եկեղեցու ան ճակատին
Խաչքար	15-16 դդ.	
Խաչքար	1558 թ.	ագուցված է եկեղեցու ան պատի հս մասում
Խաչքար	16-17 դդ.	ագուցված է եկեղեցու ան պատի հս մասում
ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՎԱԾՆԵՐԻՆ	1972 թ.	գյուղի մեջ
ՄԱՏՈՒՌ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ	13-14 դդ.	գյուղի հվ-ան մասում, բարձունքի վրա
Գերեզմանոց	13-20 դդ.	
Խաչքար Գրիգոր քահանայի, կազմող՝ Վարդ	1205 թ.	եկեղեցու հս ճակատի դիմաց
ՄԱՏՈՒՌ	19 դ.	գյուղի կենտրոնում
ՄԱՏՈՒՌ	19 դ.	գյուղի ամ կողմում
ՏԱՊԱՆԱՔԱՐ	12-13 դդ.	գյուղի ամ կողմում

Պատմության և մշակույթի հուշարձանների հողերի և Արամուսի բազալտի հանքավայրի հայցվող տեղամասի միջև հեռավորությունը ավելի քան 1. 5կմ է:

8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արամուսի բազալտի հանքավայրում «Սուսի-Սթոուն» ՍՊԸ-ի կողմից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա դրսևորվող տեխնածին ճնշումների նկարագիրը ներկայացված է ստորև:

Մթնոլորտային օդ.

Բազալտների արդյունահանման աշխատանքների ընթացքում փոշու և վնասակար գազերի արտանետումները կապված կլինեն քարի արդյունահանման, լցակույտի

ձևավորման, ճանապարհների ավտոտրանսպորտի շարժման հետ:

Նախնական հաշվարկներին համաձայն, տեղամասի տարածքում ծրագրավորված աշխատանքների իրականացման ժամանակ վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի երկօքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

Ջրային ավազան. Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տեղամասի տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Հողային ծածկույթ.

Բազալտների արդյունահանման աշխատանքների արդյունքով խախտված հողերի լեռնատեխնիկական վերականգնումները իրականացվելու է շահագործական աշխատանքների ավարտից հետո:

Բուսական և կենդանական աշխարհ.

Բազալտի արդյունահանման աշխատանքների բացասական ազդեցությունը հանքավայրի տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա աննշան է, քանի որ ընդհանուր առմամբ տեղամասի տարածաշրջանը հանդիսանում է քաղաքաշինորեն-տնտեսապես ինտենսիվ յուրացված գոտի (նկար 8), Կամարիսի և նույն շրջանում գտնվող Արամուսի, Բալահովիտի հանքավայրերը, դրանց տեղամասերը շահագործվում են բազմաթիվ ընկերությունների կողմից սկսած 1960թ.-ից: Տարածքում առկա են բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները:

Հանքարդյունահանման աշխատանքների համար նոր ճանապարհներ չեն կառուցվելու: Հիմնականում օգտագործվելու է գոյություն ունեցող ճանապարհը՝ բարեկարգելով այն: Այդ տարածքներում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է, քանի որ տրամադրվող տարածքը գտնվում է ճանապարհի հարևանությամբ, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ:

Թափոններից կարող են առաջանալ նավթամթերքների և քսայուղերի մնացորդներ, որոնք օգտագործվել են փորվածքների անցման աշխատանքների տեխնոլոգիական ցիկլում, որոնք նախատեսվում է պահեստավորել հատուկ տակառներով կամ կոնտեյներներում՝ մեկուսացված հարթակների վրա: Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006թ.-ի N430-Ն հրամանի հավելվածի՝ քսայուղերը դասվում են վտանգավորության 4-րդ դասին, իսկ սպառողական հատկությունները կորցրած յուղերը՝ վտանգավորության 3-րդ դասին:

Կենցաղային թափոններ: Դրանք բոլոր այն նյութերը կամ իրերն են, որոնցից մարդիկ ազատվում են հենց դրանք դառնում են անպետք: Կենցաղային թափոնները կազմված են սննդի, սպառողական այլ ապրանքատեսակների մնացորդներից, առանձին հավաքվող թափոններից: Այս տեսակին են պատկանում թուղթը, տեքստիլը, պլաստմասսան և այլն: Այս թափոնները կտեղափոխվեն մոտակա աղբահավաք կետեր, որտեղից դրանք պարբերաբար համայնքի Կոմունալ ծառայության կողմից տեղափոխվում են բնակավայրի աղբավայր: Հետևաբար այս թափոնները ևս շրջակա միջավայրի և մարդկանց առաջության վրա որևէ բացասական ազդեցություն չեն ունենալու: Կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 91200400 01 00 4:

Ստորև բերվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության նախնական գնահատական մատրիցը.

Աղյուսակ 5.

Շրջակա միջավայրի բաղադրիչներ	Գործողություններ		
	Արտադրական հրապարակ	Ավտոտրանսպորտ	Արդյունահանման աշխատանքներ
Մթնոլորտային օդ	ցածր կարճատև	ցածր կարճատև	ցածր կարճատև
Ջրեր	-	-	-
Հողեր	ցածր երկարատև	ցածր կարճատև	ցածր երկարատև
Կենսաբազմազանություն	աննշան	աննշան	աննշան
Պատմամշակութային հուշարձաններ	-	-	-

**9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

❖ Նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որի տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը:

❖ Օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար :

❖ Հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնվում որպես մետաղական ջարդոն :

❖ Կենցաղային աղբի տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր :

❖ Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում :

❖ Փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակները, հանքախորշերը, լցակույտերը, մուտքային և դեպի լցակույտեր տանող ավտոճանապարհը և այլն) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին :

❖ Կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով :

❖ Խախտված տարածքների ռեկուլտիվացիա :

❖ Նախատեսվում է հողաբուսաշերտը կտրել և պահել դրա համար հատկացված հատուկ վայրում՝ ծածկի տակ, ինչպես նաև հողաբուսաշերտի պահպանության միջոցառումներ՝ հողաբուսաշերտը հողմահարումից և դեգրադացիայից պահպանելու նպատակով:

❖ Ընդերքօգտագործման թափոնների կառավարում :

Արամուսի բազալտի հանքավայրի շահագործման ընթացքում «Սուսի-Սթոուն» ՍՊ ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության

կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.


1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ հունիս- սեպտեմբեր ամիսներին (շոգ և քիչ տեղումներով եղանակին)՝ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ: Որպես սահմանային թույլատրելի խտությունները ընդունվելու են. ածխածնի օքսիդի համար՝ 5մլգ/մ^3 , ազոտի երկօքսիդի համար՝ 0.085մլգ/մ^3 , մրի համար՝ $0,15 \text{մլգ/մ}^3$:

2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին երկու անգամ հաճախականությամբ:

3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով, ՀՀ կառավարության 24.08.2007թ.-ի թիվ 1277-Ն որոշմամբ սահմանված աղտոտիչ նյութերով արտադրական հրապարակի հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ վեց ամիսը մեկ անգամ հաճախականությամբ :

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մոնիթորինգի կետի տեղադիրքը (քարտեզ-սխեման) ներկայացված է ստորև նկար 9-ում



Նկար 9.

Մշտադիտարկման կետերի կոորդինատներ՝

1. X=8471038.0000 Y=4455810.0000

2. X=8471313.5028 Y=4456203.9277

3. X=8471318.0000 Y=4455918.0000

10. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ԲԱՑԱՌՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Աղյուսակ 5.

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոցառում	Մեղմման հայտանիշ
1. Աշխատանքի անվտանգություն	Վնասվածքներ և պատահարներ աշխատանքների կատարման վայրում	<ul style="list-style-type: none"> - Հանքի աշխատողների ապահովվվում համազգեստով և Անհատական Պաշտպանության Միջոցներով (ԱՊՄ) - Հանքի սարքավորումների շահագործում ԱՊՄ օգտագործման կանոնների խիստ պահպանում - Աշխատակիցների իրազեկում պաշտպանության հրահանգների վերաբերյալ 	<ul style="list-style-type: none"> - հանքի աշխատողների համազգեստ և համապատասխան ԱՊՄ ապահովում - սարքավորումների շահագործման և օգտագործման հրահանգների խախտումների բացառում
2. Արդյունահանման աշխատանքներ	Օդի աղտոտում փոշիով և արտանետումներով	<ul style="list-style-type: none"> - Նախատեսվում է հողաբուսաշերտը կտրել և պահել դրա համար հատկացված հատուկ վայրում՝ ծածկի տակ, ինչպես նաև հողաբուսաշերտի պահպանության միջոցառումներ՝ հողաբուսաշերտը հողմահարումից և դեգրադացիայից պահպանելու նպատակով: - Փոշեգոյացման կանխում օգտակար հանածոյի արդյունահանման, բարձման և տեղափոխման ժամանակ - Աշխատանքների կատարման վայրում նյութերի/ թափոնների բաց այրման արգելում 	<ul style="list-style-type: none"> - Արտադրական հրապարակի, հանքախորշի, ճանապարհների ջրցանում, տեղափոխման ժամանակ բարձված խճի ծածկում - աշխատանքների կատարման վայրում նյութերի/ թափոնների բաց այրման բացառում - հանքի տեխնիկայի և մեքենաների շահագործում առանց հավելյալ արտանետումների - Մոտակայքի բնակիչներից բողոքների բացառում

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոցառում	Մեղմման հայտանիշ
	Աղմուկ	<ul style="list-style-type: none"> - Հանքի տեխնիկական և մեքենաները պահել պատշաճ տեխնիկական վիճակում՝ բացառելով ավելորդ արտանետումները - Սահմանված աշխատանքային ժամերի պահպանում - Գեներատորների, օդի կոմպրեսորների և այլ ուժային մեխանիկական սարքավորումների շարժիչների ծածկերի փակում շահագործման ընթացքում - Աղմկախլացուցիչների տեղադրում շարժական կայանների և սարքավորումների վրա - Սարքավորումների կանխարգելիչ վերանորոգում աղմուկը նվազեցնելու նպատակով - Ոչ անհրաժեշտ և չօգտագործվող սարքավորումների անջատում 	<ul style="list-style-type: none"> - Աշխատանքային ժամերից հետո աշխատող սարքավորումների բացառում - հանքի սարքավորումների բավարար տեխնիկական վիճակ - միացված չօգտագործվող սարքավորումների բացառում - Մոտակայքի բնակիչներից բողոքների բացառում
3. Հանքի տեխնիկայի շահագործում	<ul style="list-style-type: none"> - Շրջակա միջավայրի աղտոտում արտանետումներով և արտահոսքերով - Մոտակայքի բնակչությանը պատճառած - անհարմարություն 	<ul style="list-style-type: none"> - Հանքի սարքավորումների պատշաճ տեխնիկական վիճակի ապահովում - Ոչ մի հավելյալ արտանետում - Վառելիքի և քսայուղերի ոչ մի արտահոսք - Աշխատանքային ժամերի պահպանում 	<ul style="list-style-type: none"> - մեքենաների և տեխնիկայի պատշաճ տեխնիկական վիճակ - Հաստատված աշխատանքային ժամերից հետո ոչ մի շահագործվող ծանր տեխնիկա կամ մեքենա Մոտակայքի բնակիչներից բողոքների ստացման բացակայություն
4. Արդյունահանման սարքավորումների սպասարկում	<ul style="list-style-type: none"> - Սարքավորումների շահագործման հետևանքով մակերևութային և - ստորգետնյա ջրերի և հողի աղտոտում 	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի լվացում բնական հոսքերից առավելագույն հեռավորության վրա - Հանքի տեխնիկայի յուղում և լցավորում նախապես որոշված լցավորման կայաններում/ սպասարկման կետերում 	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների լվացման արդյունքում ուղղակի արտահոսքի բացակայություն դեպի ջրային ավազաններ - Հանքի տարածքի սահմաններում կամ - մոտակայքում հողի վրա վառելիքի կամ քսայուղերի հետքերի բացակայություն

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոցառում	Մեղմման հայտանիշ
	<ul style="list-style-type: none"> Նավթամթերքներով - Վնաս հրդեհի դեպքում 		<ul style="list-style-type: none"> - Հրդեհի մարման հիմնական միջոցների առկայություն հանքի տարածքում
<p>5. Ընդերքօգտագործման թափոնների գոյացում</p>	<ul style="list-style-type: none"> - Ընդերքօգտագործման թափոնների ոչ պատշաճ կառավարման արդյունքում վթարային վիճակների առաջացում - Հանքի տարածքի և շրջապատի գեղագիտական տեսքի վատացում 	<ul style="list-style-type: none"> - Դատարկ ապարների պահեստավորում հատուկ հատկացված վայրերում - Դատարկ ապարների լցակույտերի պարբերական ջրցանում փոշու գոյացումը նվազացնելու նպատակով 	<ul style="list-style-type: none"> - Հանքի տարածքում դատարկ ապարների կուտակում հատկացված վայրերում - Հանքի տարածքում փոշու արտանետումների քանակի համապատասխանություն ՍԹԱ նախագծին
<p>6. Հեղուկ թափոնների գոյացում</p>	<ul style="list-style-type: none"> - Մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտում - Աշխատանքների կատարման վայրում սանիտարահիգիենիկ պայմանների վատացում 	<p>Հանքի տարածքում զուգարանների տեղակայում և պահպանում սանիտարական նորմերին համապատասխան</p>	<p>Հանքի տարածքում պատշաճ սանիտարական պայմաններում գտնվող զուգարանների առկայություն</p>
<p>7. Բանեցված յուղերի հեռացումից գոյացող թափոններ</p>	<ul style="list-style-type: none"> - Արտադրական հրապարակի տարածքի աղտոտում - Արդյունահանման աշխատանքների կատարման վայրի և շրջապատի գեղագիտական տեսքի վատթարացում 	<ul style="list-style-type: none"> - Յուղերի անվտանգ փոխադրում պահեստային տարածք - Յուղերի անվտանգ պահեստավորում - Յուղերի հեռացում լիցենզավորված կազմակերպության կողմից 	<ul style="list-style-type: none"> - Փոխարինված յուղերը պատշաճ կերպով պահեստավորում - Փոխարինված յուղերը հեռացում լիցենզավորված կազմակերպության կողմից
<p>8. Երթևեկության և հետիոտների անվտանգություն</p>	<p>Ուղղակի և անուղղակի վտանգներ երթևեկությանը և հետիոտներին հանքի շահագործման աշխատանքների ժամանակ</p>	<ul style="list-style-type: none"> - Նախագգուշացնող նշաններ, արգելքներ և երթևեկության ուղղության փոփոխում - Երթևեկության կառավարման համակարգ և անձնակազմի ուսուցում, հատկապես հանքի մուտքի մոտ և մոտակա ինտենսիվ երթևեկության կառավարման համար: Անվտանգ անցումների ապահովում հետիոտների համար այն վայրերում, որտեղ անցնում են հանքը սպասարկող մեքենաները - Աշխատանքային ժամերի հարմարեցում տեղի երթևեկության պայմաններին, օրինակ՝ 	<ul style="list-style-type: none"> - Հանքի ապահով տարածք - Աշխատանքների հստակ տեսանելի տարածք, հանրության զգուշացում հնարավոր վտանգների վերաբերյալ - Կարգավորված երթևեկություն

		<p>խուսափում խոշոր փոխադրումներից ինտենսիվ երթևեկության ժամերին, - Տարածքում երթևեկության ակտիվ կառավարում պատրաստված և տեսանելի արտահագուստով անձնակազմի կողմից, եթե դա պահանջվում է մարդկանց անվտանգ ու հարմարավետ տեղաշարժի համար</p>	
--	--	--	--

11. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Գործողություն	Ի՞նչ (է հսկվում)	Որտե՞ղ է (հսկվում)	Ինչպե՞ս է (հսկվում)	Ե՞րբ (սահմանել հաճախակա- նությունը / կամ շարունականությունը)	Ինչու՞ է (հսկվում)
1. Փոշի	Օդի վիճակը	Հանքի տարածք, լցակույտեր և մուտքային ճանապարհներ	Տեսողական զննում Գործիքային չափումներ	Պարբերական	Նվազեցնել ռիսկերը անձնակազմի և հարևան համայնքների համար
2. Հողի	Հողի վիճակը	Հանքի տարածք	Գործիքային չափումներ	Պարբերական	Կանխարգելել ել հողերի սղոտվածությունը
2. Աղմուկ	<ul style="list-style-type: none"> - Աշխատանքային ժամերի պահպանում - Ավտոմեքենաների և տեխնիկայի տեխնիկական վիճակը - Աղմուկի մակարդակը (բողոքների դեպքում) 	Հանքի տարածք	<ul style="list-style-type: none"> - Տեսողական զննում - Աղմուկի մակարդակի գործիքային չափում (բողոքների դեպքում) 	<ul style="list-style-type: none"> - Պարբերական - Բողոքից հետո երկու շաբաթվա ընթացքում 	Նվազեցնել անհարմարությունները անձնակազմի և հարևան համայնքների համար
3. Ավտոմեքենաների և տեխնիկայի սպասարկում	<ul style="list-style-type: none"> - Ավտոմեքենաների և տեխնիկայի վրացում բնական ջրային հոսքերից առավելագույն հեռավորության վրա - Ավտոմեքենաների լցավորում և յուղում նախապես որոշված լցավորման կայաններում /սպասարկման կետերում 	Հանքի տարածք	Աշխատանքների զննում	Ընտրանքային զննումներ աշխատանքային ժամերի ընթացքում	<ul style="list-style-type: none"> - Խուսափել սարքավորումների շահագործման ընթացքում նավթամթերքներով ջրի և հողի աղտոտումից - Ժամանակին տեղայնացնել և նվազեցնել հնարավոր վնասը

Գործողություն	Ի՞նչ (է հսկվում)	Որտե՞ղ է (հսկվում)	Ինչպե՞ս է (հսկվում)	Ե՞րբ (սահմանել հաճախակա- նությունը / կամ շարունականությունը)	Ինչու՞ է (հսկվում)
4. Մակաբացման աշխատանքներ	<ul style="list-style-type: none"> - Դատարկ ապարների պահեստավորում հատուկ հատկացված վայրերում - Դատարկ ապարների լցակույտերի պարբերական ջրցանում փոշու գոյացումը նվազացնելու նպատակով 	Հանքի տարածք, լցակույտ	Աշխատանքների զննում	Պարբերաբար	<ul style="list-style-type: none"> - Հանքի տարածքում բեկորների և ցրված մասնիկների պատճառով պատահարներից խուսափում - Հանքի շրջապատի գեղագիտական տեսքի պահպանում - Փոշու արտանետումների նվազեցում
5. Հեղուկ թափոնների գոյացում	- Հանքի տարածքում զուգարանների կազմակերպում և պահպանում սանիտարական նորմերին համապատասխան	Հանքի տարածք	Աշխատանքների զննում	Աշխատանքների ժամանակահատված ողջ	- Մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտման կրճատում
6. Յուղերի փոխարինումից թափոնների առաջացում	<ul style="list-style-type: none"> - Բանեցված յուղերի փոխադրում պահեստ - Բանեցված յուղերի պահեստավորման պայմանները յուղերի պահեստում 	<ul style="list-style-type: none"> - Փոխադրման երթուղին - Բանեցրած յուղերի պահեստ 	Տեսողական զննում	<ul style="list-style-type: none"> - Յուղերի փոխադրման ընթացքում - Պարբերաբար յուղերի պահեստավորման ն ընթացքում 	Արտադրական հրապարակի տարածքի աղտոտումից խուսափում
7. Աշխատողների	- Հանքի աշխատողների	Հանքի տարածք	Աշխատանքների	Աշխատանքների	Կրճատել հանքի

Գործողություն	Ի՞նչ (է հսկվում)	Որտե՞ղ է (հսկվում)	Ինչպե՞ս է (հսկվում)	Ե՞րբ (սահմանել հաճախականությունը/կամ շարունականությունը)	Ինչու՞ է (հսկվում)
առողջություն և անվտանգություն	կողմից համազգեստի և ԱՊՄ կրումը - Հանքի սարքավորումների շահագործման և ԱՊՄ օգտագործման կանոնների խիստ պահպանում		զննում	ողջ ընթացքում	բանվորների կողմից վնասվածքների ստացման և պատահարների հավանականությունը
8. Վտանգավոր թափոնների (յուղոտ լաթեր, յուղով աղտոտված ավազ) կառավարում	- Վտանգավոր թափոնների առանձնացում հանքում առաջացած այլ տեսակի թափոններից - Պատշաճ կերպով փակվող և պահպանվող պահեստային տարածքի առկայություն վտանգավոր նյութերի համար - Համաձայնություն լիցենզավորված մարմինների հետ ազգային օրենսդրությանը և լավագույն ազգային պրակտիկային համապատասխան վտանգավոր թափոնները տարածքից դուրս բերելու և վերամշակելու/հեռացնելու վերաբերյալ	հանքի տարածք	- հանքի զննում - Լիցենզավորված կազմակերպության հետ թափոնների հեռացման վերաբերյալ պայմանագրի առկայության ստուգում	Հանքի շահագործման ողջ ընթացքում	- Պատշաճ սանիտարական պայմանների պահպանում հանքի տարածքում - Արտադրական հրապարակի տարածքի աղտոտման սահմանափակում
9. Հանքի սարքավորումների շահագործում և պահպանում	- Յուղերի հավաքման միջոցների առկայություն տարածքում թափված և արտահոսած յուղերը	Հանքի տարածք	Հանքի տարածքի զննում	Հանքի շահագործման ողջ ընթացքում	- Տարածք մտնող անձնակազմի և այլ մարդկանց առողջության

Գործողություն	Ի՞նչ (է հսկվում)	Որտե՞ղ է (հսկվում)	Ինչպե՞ս է (հսկվում)	Ե՞րբ (սահմանել հաճախականությունը/կամ շարունականությունը)	Ինչու՞ է (հսկվում)
	<p>մաքրելու համար</p> <ul style="list-style-type: none"> - Շահագործման ընթացքում յուղի արտահոսքի կանխում - Արտահոսած և պատահաբար թափված յուղերի ժամանակին մաքրում 				<p>համար վտանգների կանխում</p> <ul style="list-style-type: none"> - Սարքավորում- ների շահագործման ու պահպանության հետևանքով նավթամթերք- ներով ջրի և հողի աղտոտումից խուսափում - Հրդեհի դեպքում վնասի ժամանակին տեղայնացում ու - նվազեցում
10. Պատրաստվածություն արտակարգ իրավիճակներին	Հրդեհի ահազանգման և տեղայնացման համակարգերի առկայություն	հանքի տարածք	Պարբերական ստուգումներ	հանքի շահագործման ողջ ընթացքում	<ul style="list-style-type: none"> - Նվազեցնել ռիսկերը անձնակազմի և հարևան համայնքների համար - հանքի շահագործման ընդհատումից խուսափում

12. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ -ի տվյալներ
2. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
3. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
4. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2011թ
5. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
6. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954
7. ՀՀ Կոտայքի մարզպետարանի պաշտոնական կայք
8. Արամուս համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի մշակման աշխատանքների նախագծային առաջադրանք (<https://www.azdarar.am/docs/46910/>)